

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԵՊՀ կառավարման և գործարարության ամբիոնի հայցորդ
Էլիոսս՝ gayanhayrapetyan@mail.ru

Հողվածում փորձ է արվում բացահայտել լիզինգ հասկացությունը և նրա դերը արդյունավետ ներդրումային քաղաքականության գործընթացում: Ելնելով մասնագիտական գրականության մեջ գոյություն ունեցող մոտեցումների քննական վերլուծության արդյունքներից՝ հեղինակի կողմից տրվել է լիզինգի՝ որպես ֆինանսական գործիքի բուն էության ճշգրիտ բնորոշումները, մասնավորապես՝

1. Լիզինգը գործարարության զարգացման համար հիմնական միջոցների ձեռք բերման երկարաժամկետ ֆինանսավորում է:
2. Լիզինգը արտադրական միջոցների օգտագործմամբ շահույթ ստանալու հնարավորություն է՝ առանց դրանց սեփականության իրավունքի ստացման հնարավորության:
3. Լիզինգը վարկավորումը լրացնող ֆինանսավորում է:

Լիզինգային գործարքը դասվում է բարդ գործարքների շարքին: Ուսումնասիրելով լիզինգի գործառույթները՝ դրանք կարելի է բաժանել երկու հիմնական խմբի՝ միկրոտնտեսական և մակրոտնտեսական: Լիզինգի երկրորդ կարևորագույն գործառույթը վերաբերում է երկրի ամբողջ տնտեսության զարգացմանը: Այն հնարավորություն է ստեղծում ազգային տնտեսության բոլոր ճյուղերի զարգացման համար, ինչպես նաև ապահովում է միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացումը և ընդլայնումը:

ՀՀ տնտեսության համար այս խնդիրը ավելի քան կարևոր է, քանի դեռ ձեռնարկություններում կիրառվում են տեխնիկական միջոցներ, որոնք թե՛ բարոյապես, թե՛ ֆիզիկապես մաշված են: Քննարկված տեսակետների համատեքստում հեղինակը պնդում է, որ ՀՀ-ում լիզինգի զարգացումը դարձել է խիստ անհրաժեշտ պահանջ:

Բանալի բառեր՝ լիզինգ, վարձակալություն, գույք, ձեռնարկատիրություն, շուկա, ֆինանսական լիզինգ, մասնակիցներ, գործարք, սեփականություն, գործառույթ, կարգավորում, խթանում:

Լիզինգը վարձակալության հատուկ ձև է, երբ օգտագործման համար գնվում են մեքենաներ, սարքավորումներ, և այլ նյութական միջոցներ: Ձեռնարկատիրական գործունեությունը հաճախ իր մասնակիցներից պահանջում է բավական թանկարժեք ունեցվածքի (գույքի) առկայություն: Տնտեսական պրակտիկան մշակել է վերոհիշյալ նպատակին հասնելու տարբեր միջոցներ: Թանկարժեք գույքի (սարքավորումների և այլնի) սեփականության իրավունքով կարելի է ձեռք բերել առքուվաճառք կատարելով վերոհիշյալ գույքի դիմաց անմիջապես վճարելու միջոցով կամ ապառիկ: Նույն խնդիրը կարել է լուծել բանկի հետ կնքած վարկային պայմանագրի հիման վրա բանկից ստացված միջոցների հաշվին: Պահանջվող գույքը կարելի է ձեռք բերել նաև ժամանակավոր օգտագործման նպատակով ապրանքային վարկի պայմանագրի հիման վրա: Վերոհիշյալ մեխանիզմները, որոնք կիրառվում են տարբեր տնտեսական և իրավական համակարգերում, ունեն ինչպես թերություններ, այնպես էլ առավելություններ՝ կախված այն հանգամանքից, թե ինչպիսի տնտեսական և կազմակերպչական պայմաններում է գտնվում շահագրգիռ անձը: Առքուվաճառքի պայմանագրով գույքի ձեռքբերումը կարող է բավական ծախսատար լինել: Բացի դրանից՝ պետք է հաշվի առնել մեկ այլ կարևոր հանգամանք՝ ևս. հաճախ ապագա օգտագործողը կարիք ունի գույքը օգտագործելու միայն որոշակի ժամանակահատվածի ընթացքում, ուստի գույքի ձեռքբերումը սեփականության իրավունքով դառնում է ինքնանպատակ: Հետևաբար անհրաժեշտ է մշակել այնպիսի մեխանիզմ, որը կապահովի ապագա վարձակալին իրեն անհրաժեշտ ժամանակահատվածով, ցանկացած նոր գույքով, որը վարձակալը հնարավորություն կունենա օգտագործման ժամանակահատվածի ավարտին ձեռք բերել որպես սեփականություն: Հարկ է նշել այն հայտնի փաստը, որ եթե պրակտիկան առաջ է բերում որոշակի խնդիր, ապա վաղ թե ուշ մշակվում է որոշակի իրավական կարծիք, որն օգնում է կարգավորել առաջացած խնդիրը: Այն հիանալի կերպով հնարավոր է իրականացնել ֆինանսական վարձակալության (լիզինգի) շնորհիվ, քանի որ հենց այդ գործիքի միջոցով է լուծվում մատնանշված խնդիրը: Ֆինանսական վարձակալությունը (լիզինգը) համախմբել է բոլոր այն պահանջները, որոնք կարող են ունենալ ապագա օգտագործողները և այն կազմակերպությունները, որոնք տրամադրում են գույքը ժամանակավոր տիրապետման և օգտագործման:

«Լիզինգ» տերմինը առաջացել է անգլերեն «to lease» բայից և բնութագրվում է որպես տնտեսական և իրավական հարաբերությունների կողմերի գործողությունների համախումբ, որն առաջանում է, երբ գույքը տրամադրվում է վարձակալությամբ: Հարկ է նշել, որ մի խումբ տնտեսագետներ լիզինգը համարում են ֆինանսական շուկայի նոր գործիք, որն ունի մի շարք առաձնահատկություններ: Սակայն գիտնականների մի այլ խումբ, լիզինգը

համարելով վարձակալական հարաբերությունների տարատեսակ, կարծում են, որ այն ունի երկար տարիների պատմություն¹:

Մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ վարձակալական լիզինգային գործարքներն ավելի վաղ ժամանակներից կիրառում են տնտեսական հարաբերություններում: Ինչպես նկատել է Վ. Գազմանը, վարկային, վարձակալական գործարքների ներդրման դեպքում մեծ է կրոնավորների դերը²: Նա առաջնորդվում է հայտնի գիտնականներ Պ. Բալտուսի և Բ. Մայդջերի «Եվրոպական լիզինգի դպրոցը» գրքով, որտեղ հիշատակումներ են առկա 1984 թվականին կատարած պեղումների ընթացքում հայտնաբերված կավե սալիկների վերաբերյալ, որոնք վկայում են լիզինգային հարաբերություններում կրոնավորների ակտիվ մասնակցության մասին³:

Լիզինգի հայտնի մասնագետ Դեվիդ Պորտերը գտնում է, որ ֆինանսական և օպերատիվ լիզինգի տարբերությունն առաջին անգամ կազմվել է հռոմեական կասրությունում Ուստիանի կողմից և հրատարկվել է «Ինստուցիա» երրորդ գրքում⁴:

Հարկ է նշել, որ աշխարհում առաջին լիզինգային ընկերությունը ստեղծվել է 1855 թվականին Բերմինգհամում (Անգլիա) «Birmingham wagon company»: Այդ կազմակերպությունը 5-8 տարի ժամկետով լիզինգով տրամադրում էր երթուղային մեքենաներ՝ ամփի տեղափոխման համար⁵:

Ավստրիացի պատմագետ Վ. Խոյերի հավաստմամբ՝ «լիզինգ» տերմինն առաջին անգամ 1877 թվականին կիրառվել է «Բելլ» ընկերության կողմից, որը որոշեց ոչ թե վաճառել իր հեռահաղորդակցման սլայդները, այլ տալ վարձակալությամբ⁶: Այս գործարքը նպաստեց ԳՏԱ ներդրման ու լիզինգի զարգացման գործում ունենալ կարևոր նշանակություն: Եթե 70-80 տարի առաջ փոքրաթիվ տնտեսագետներ էին պատկերացնում կրթության էությունն ու նշանակությունը տնտեսությունում, ապա այժմ լիզինգի ճանապարհով կատարվում է Եվրոպայում ներդրումների ավելի քան 25%-ը: Արևմտյան Եվրոպա ներմուծվող մեքենա-սարքավորումների 15%-ը ներմուծվում է լիզինգով տրամադրման նպատակով⁷:

¹ St' u Գазман В. Д., Лизинг. Теория, практика, комментарии, Москва, 2003, с.12-14:

² St' u նույն տեղում, էջ 6-13:

³ St' u Բалтус П., Майджер Б., Школа европейского лизинга //Лизинг-ревю, 1996, май N1:

⁴ St' u Новицкий И.Б., Римское право, 6-ое изд. Стереотип М., Гуманитарное знание, 1998, с.185-186:

⁵ St' u Бутенина Н.В., Лизинг Великобритании// Лизинг-ревю, 2000 N3/4 с.27:

⁶ St' u Хойтер В., Как делать бизнес в Европе, Москва, 1990, с.25-32:

⁷ St' u Комаров В.В., Межгосударственный лизинг в СНГ. Государство и право, 1998, с.103:

Այսպիսով, ինչպես նկատում ենք, լիզինգային հարաբերություններն ունեն զարգացման երկար պատմություն: Մասնագիտական գրականության մեջ լիզինգային հարաբերությունների հետ մեկտեղ գրեթե հավասարապես կիրառվում է վարձակալություն հասկացությունը: Նախկինում մեծ մասամբ կիրառվել է վարձակալություն անձանց անվանափոխության իրավունքի փոխանցման ձևը (գործնական լիզինգ): Այս դեպքում հարց է առաջանում, թե ինչով է տարբերվում լիզինգը վարձակալությունից:

Վարձակալությունը հիմնական միջոցի տրամադրումն է ժամանակավոր օգտագործման որոշակի վճարի դիմաց: Սովորաբար վարձակալության է տրվում վարձատուի սեփական գույքը, որի դիմաց վճարն էլ նրա եկամուտն է: Վարձակալության գործարքի դեպքում կողմերը երկուսն են՝ վարձակալը և վարձատուն: Սակայն լիզինգի կիրառությունն առաջ բերեց ֆինանսական վարձակալության ձևը: Ֆինանսական լիզինգի կիրառման դեպքում լիզնգատուն հիմնական միջոցն արտադրողի և այն օգտագործողի միջև կատարում է ֆինանսական միջնորդի դեր, որն էլ իրականացնում է այդ գործարքի ֆինանսավորումը: Այնուամենայնիվ, մեր կարծքով՝ լիզինգի առարկայի մեկնաբանությունները սահմանափակ են և ամբողջովին չեն բացահայտում արդ ճկուն կրեդիտային գործիքի էությունը:

Եվրոպական լիզինգային ընկերությունների ասոցացիաների ֆեդերացիայի բնորոշմամբ «Լիզինգը գործարարի, արդյունաբերական ապրանքների, սարքավորումների, մեխանիզմների, անշարժ գույքի վարձակալության պայմանագիր է վարձակալի կողմից այն արտադրատնտեսական նպատակով օգտագործելու համար, այն դեպքում, երբ ապրանքը գնվում է վարձատուի կողմից և նա էլ պահպանում է սեփականության իրավունքը»¹:

Լիզինգի դեպքում գույքի սեփականության իրավունքը մինչև լիզինգի պայմանագրի ավարտը պատկանում է լիզինգատուին:² Այսպիսով, լիզինգը գույքի սեփականատիրոջ՝ վարձատուի և վարձակալի միջև համաձայնության ձև է՝ գույքի օգտագործման վերաբերյալ սահմանված տարեկան, կիսամյակային, ամսական վճարով:

Լիզինգի հայտնի մասնագետ Վ. Ա. Գորեմկինի³ կարծիքով՝ լիզինգը սեփականության հարաբերությունների իրացման միջոց է, որն արտահայտում է որոշակի վիճակ: Դա ձեռնարկատիրական գործունեության համակարգ է, որը նկատում է կազմակերպատնտեսական հարաբերությունների որևէ ձև՝

¹ St'у Трушкевич Т. В., Трушкевич С. В., Лизинг: Амалфея, 2001, с. 25-30:

² St'у Горбенков В., Филатов Т., Закон о лизинге примет: анализ Лизинг-ревью N9-10, с.18:

³ St'у Красева Т. А., Основы лизинга, Ростов Н/Д, Феникс 2003, с. 6-7.

վարձակալական, ներդրումային և առևտրային, որոնցից յուրաքանչյուրն առանձին ամբողջությամբ չի բացահայտում լիզինգի էությունը:

Ըստ Վ. Դ. Գազմանի տեսակետի՝ «Լիզինգը՝ որպես տնտեսագիտական կատեգորիա, ձեռնարկատիրական գործունեության յուրահատուկ տեսակ է, որն ուղղված է ժամանակավորապես ազատ կամ ներգրավված պայմանագրով (լիզինգի) վարձատուն (լիզինգատուն) պարտավորվում է ձեռք բերել սեփականության իրավունքով, պայմանագրով սահմանված գույքը համապատասխան որոշակի վաճառողից և տրամադրել այն վարձակալին (լիզինգատուին) ձեռնարկատիրական նպատակների համար ժամանակավոր օգտագործման»¹:

Ըստ Ե. Վ. Յաբատովայի տեսակետի՝ «Լիզինգ ասելով հասկանում ենք գույքային հարաբերություններ, որի ժամանակ մի կազմակերպությունը (օգտագործողը) դիմում է մյուսին (լիզինգային ընկերությանը) անհրաժեշտ սարքավորման ձեռքբերման և ժամանակավոր օգտագործման հասցնելու խնդրանքով»²:

Նույն տեսակետն են ներկայացրել Կ. Ֆիլիպովը և Բ. Միգուլտայը. «Լիզինգը համաձայնություն է գույքի սեփականատիրոջ (վարկատու) և վարձակալի միջև գույքի օգտագործման իրավունքի փոխանցման վերաբերյալ որոշակի ժամանակով վճարելով, որը գանձվում է տարեկան կիսամյակային կամ ամսական սկզբունքով»³:

Վ. Մ. Զուխան իր «Լիզինգ» աշխատությունում լիզինգը սահմանում է որպես հարաբերություններ, որոնց ժամանակ վարձատուն պարտավորվում է վարձակալի նշած գույքը սեփական իրավունքով ձեռք բերել վարձակալի կողմից որոշած վաճառողից և որոշակի պայմաններով հանձնել վարձակալի ժամանակավոր տիրապետմանը:⁴ Ըստ Կ. Սուսանյանի⁵ լիզինգ հասկացության տակ հասկանում ենք արտադրական հիմնական միջոցների, (մեքենաներ, սարքավորումներ, գործարաններ, տրանսպորտային միջոցներ և այլն) և այլ արտադրական նպատակներով կիրառվող ապրանքների վարձակալությունը այն դեպքում, երբ

¹ Газман В. Д., Лизинг. Теория, практика, комментарии /В. Д. Гауман, М., фонд Правовая культура, 1997, с. 21.

² Кабатова Е.В., Лизинг: правовое регулирование, практика / Е. В. Кабатова, М., ИНФРА-М, 1997, с.18.

³ Филипов К. К., Международный лизинг. Новая система экономических связей в России //К. К. Филипов, Б. С. Мигалатай, СПб:СПИТМО и ПФ Надежда, 1992, с. 5.

⁴ Տե՛ս Գусаков Б., Сидорович Ю., Лизинг-катализатор экономического роста.//Финансы 2001, N1 с.12-14.

⁵ Տե՛ս Կусанян К., Самые выгодные сделки: Лизинг, бартер, товарообмен с зарубежными партнерами / К.Бусанян, М., Мировой океан, 1992, с.5.

դրանք գտնվում են վարձատուի կողմից և վերջինս էլ պահպանում է սեփականության իրավունքը մինչև վարձակալության ժամկետի վերջը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 667 հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով՝ վարձատուն պարտավորվում է վարձակալի նշած գույքը սեփականության իրավունքով ձեռք բերել վարձակալի կողմից որոշակի վաճառողից և վճարի դիմաց ստանձնել վարձակալի ժամանակավոր տիրապետմանը...»¹:

Ներկայացված սահմանումները փաստում են «լիզինգ» հասկացության տարաբնույթ մեկնաբանությունները: Մի կողմից այն դիտարկվում է որպես ներդրումային հատուկ լծակ, իսկ մյուս կողմից՝ որպես վարկային գործիք՝ պահպանելով վարկի հատկանիշները:²

Տնտեսագետների մի խումբ լիզինգը դիտարկել է որպես տնտեսական կատեգորիա և ուշադրությունը կենտրոնացրել սեփականության իրավունքի փոխանցման վրա: Մյուս խումբը լիզինգը դիտարկում է որպես ձեռնարկատիրական գործունեության տեսակ, որոշները՝ որպես ֆինանսավորման գրավիչ տարբերակ կամ նույնացնում են երկարաժամկետ վարձակալության կամ ապրանքային վարկի հետ:

Այսպիսով, լիզինգի՝ որպես ֆինանսական գործիքի բուն էությունը ճշգրիտ արտահայտող բնորոշումներ են.

- Լիզինգը գործարարության զարգացման համար հիմնական միջոցների ձեռք բերման երկարաժամկետ ֆինանսավորում է:

- Լիզինգը արտադրական միջոցների օգտագործման և դրա հետևանքով շահույթ ստանալու հնարավորություն է՝ առանց դրանց սեփականություն իրավունքը ձեռք բերելու, սակայն լիզինգի ավարտին սեփականության իրավունքի ստացման հնարավորությամբ:


- Լիզինգը վարկավորումը լրացնող ֆինանսավորում է:

Լիզինգային գործարքը դասվում է բարդ գործարքների շարքը: Այն սովորաբար ենթադրում է գործարքային լիզինգատու կազմակերպություն, մատակարարի և լիզինգատուի մասնակցությամբ³: Լիզինգային գործարքը ներկայացված է գծապատկերում:

¹ Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգիրք <<<< պաշտոնական տեղեկագիր>>1998, թիվ 6, էջ 227:

² Տե՛ս Иванов А. А., Договор финансовой аренды(лизинг). Учебно-практическое пособие, М., Проект, 2001, с.64.

³ Տե՛ս Сахарчук В., Виды лизинговой операции//Хозяйство и право, 1998, N4, с.26.



Գծապատկեր: Լիզինգային գործարքի մասնակիցները:

Գծապատկերից հետևում է, որ լիզինգային գործարքը բաղկացած է մի շարք այլ գործարքներից, որոնք փոխկապակցված են և լրացնում են մեկը մյուսին:

Լիզինգի հիմնական սուբյեկտներ են լիզինգատուն, լիզինգառուն և մատակարարը՝ վաճառողը:

Լիզինգատուն ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը սեփական կամ ներգրավված դրամական ռեսուրսների հաշվին, ըստ լիզինգի պայմանների սեփականության իրավունքի, ձեռք է բերում համապատասխան մատակարարից գույք ու այն փոխանցում լիզինգառուին որոշակի վճարի դիմաց ժամանակավոր օգտագործման և տիրապետման իրավունքով:

Լիզինգառուն իրավաբանական կամ ֆիզիկական անձ է, որը լիզինգի պայմանագրով պարտավոր է ընդունել լիզինգի առարկան որոշակի վճարով, որոշակի ժամկետով ու համապատասխան այլ պայմաններով ժամանակավոր տիրապետում է օգտագործման իրավունքով:

Մատակարարը (վաճառողը) ֆիզիկական կամ բանական անձ է, որը ըստ առքուվաճառքի պայմանագրի սահմանված ժամկետում վաճառում է գույքը լիզինգատուին, որը լիզինգի առարկան է:

Գործարարության ոլորտում լիզինգի տարածումը կապված է նրա առավելությունների հետ, քանի որ լիզինգը ունի առավելություններ գործատուի բոլոր մասնակիցների համար: Զուտ կայացած երկրներում սովորաբար տարբեր մեթոդներով խթանվում է լիզինգային ընկերությունների գործունեությունը: Վերջիններս իրենց հերթին աջակցում են օգնել ինչպես մատակարարներին՝ ապահովելով լրացուցիչ իրացման ուղիներ և գովազդ ապրանքի համար, այնպես

էլ հաճախորդներին, որոնց, այլ կեպ ասած, տրամադրվում են վարկային ռեսուրսներ:

Լիզինգի մասին մասնագիտական գրականության մեջ առաջարկվում է լիզինգի բնույթի բացահայտման տարբեր մոտեցումներ¹:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ լիզինգը չի ստացել միանշանակ մեկնաբանություն, որը կարելի է նշել որպես վարկավորման տեսակ², երկարաժամկետ վարձակալության կամ վարձակալության ձևերից մեկը³, արտադրական երկարաժամկետ վարձակալության կամ վարձակալության ձևերից մեկը⁴, արտադրական միջոցների առքուվաճառք⁵, ուրիշի գույքի օգտագործում⁶, լիազորագրով ուրիշի գույքի կառավարում⁷:

Լիզինգի այդքան տարբեր մեկնաբանությունները վկայում են, որ այն իրենից ներկայացնում է հարաբերությունների բարդ համակարգ:

Ուսումնասիրելով լիզինգի ծագման պատմությունները և լիզինգի տեսակները՝ անհրաժեշտություն է առաջանում նաև տարբերել լիզինգի իրականացման մի շարք գործառույթներ: Ե. Չեկմատևան առանձնացնում է լիզինգի հետևյալ գործառույթները⁸՝ ֆինանսական, արտադրական, իրացման, հարկային ու ամորտիզացիոն արտոնություններից օգտվելը:

Լիզինգի ֆինանսական գործառույթն ավելի քան ակնհայտ է, քանի որ այն ներդրման տեսակ է՝ ուղղված հիմնական միջոցների ձեռքբերմանը⁹:

Լիզինգի արտադրական գործառույթի էությունը այն է, որ լիզինգառուն, որոշելով դիմել լիզինգի, կարողանում է լուծել իր արտադրական խնդիրները: Լիզինգն առավել արդյունավետ է թանկարժեք հիմնական միջոցների ձեռքբերման դեպքում: Լիզինգառուն տնտեսում է շրջանառու միջոցները՝ միաժամանակ հնարավորություն ունենալով կիրառել ԳՏԱ-ին համապատասխան հիմնական միջոցները և արտադրել կամ մատուցել որակյալ արտադրանք կամ ծառայություն:

¹ Տե՛ս Юсупова А. Т., Развитие лизинга странах Западной Европы/Эко, N10, 1998, с.45-51.

² Տե՛ս Златкин Б., Лизинг как метод кредитования// Экономика Украины, N4, 1997, с. 86-88:

³ Сквирская Е., Лизинг как разновидность аренды//АиН N11,1999, с.1-8.

⁴ Брагинский М. И., Ветренский В. В., Договорное право. КН.2Договоры о передаче имущества, М., Статут, 2000, с.15-50.

⁵ Տե՛ս Волков Н. Г., Комментарий к федеральному закону от 29 октября 1998г «1167-ФЗ» "О лизинге"/Главный бухгалтер, N22 (ноябрь),1998, с. 58-63.

⁶ Газман В. Д., Рынок лизинговых услуг, М., Фонд правовая культура,1999, с.100-120:

⁷ Чекматова Е., Основы лизинга, Ростов Н/Д, Феникс, 2003, с. 12.

⁸ Ковалева А. М., Финансовый менеджмент. Учебник, М., ИНФРА-М 2004, с. 90.

⁹ Տե՛ս Лелецкий Д. В., Банковское финансирование лизинга (некоторые вопросы кредитного анализа), Лизинг-ревью, 1998, N 7-8, с. 57:

Լիզինգի իրացման գործառույթն արտահայտվում է այն դեպքում, երբ այն կիրառվում է սպառողների շրջանակը մեծացնելու, նոր շուկաներ գրավելու նպատակով:

Ինչպես նշում է Ե. Չեմակովան, արտերկրում, մասնավորապես ԱՄՆ-ում, Անգլիայում լիզինգային գործարքների ժամանակ կիրառվում են հարկային և ամորտիզացիոն արտոնություններ: Վարձակալը և վարձատուն լիզինգի կիրառման դեպքում հնարավորություն են ստանում նվազեցնելու հարկային վճարումները: Դա է պատճառը, որ լիզինգը արագ տարածում ստացավ արևմտյան երկրներում¹:

Վ. Գորեմկինը առաձնացնում է լիզինգի հետևյալ հիմնական գործառույթները.²

Ֆինանսական, արտադրական, հարկային ամորտիզացիոն արտոնությունների կիրառման, ձեռնարկատիրական գործունեության ընդլայնման, մրցակցային հարաբերությունների զարգացման և մասնավորեցման:

Որոշ տնտեսագետներ նշում են, որ լիզինգին բնորոշ է հետևյալ գործառույթները՝ վերարտադրության, խթանման, կարգավորման:

Վերարտադրության գործառույթն իրականացվում է լիզինգատուի ներդրումային գործունեության միջոցով, որի արդյունքում լիզինգատուն ձեռք է բերում համապատասխան ռեսուրսներ: Վերարտադրության գործառույթն իր արտահայտությունն է գտնում նաև հիմնական միջոցների վերարտադրության մեջ:

Լիզինգի խթանման գործառույթի էությունն այն է, որ այն խթանում է կապիտալի կուտակման գործընթացը, արտադրական ներդրումները, ԳՏԱ-ն և տնտեսական աճը:

Լիզինգի կարգավորման գործառույթը հիմնականում դրսևորվում է երկրի տնտեսության ճյուղերի զարգացման մեջ: Լիզինգային համակարգի միջոցով հնարավորություն է ստեղծվում փոփոխել մակրոտնտեսական համամասնությունները, ընդլայնել միջազգային հարաբերությունները:

Ուսումնասիրելով լիզինգի գործառույթները՝ դրանք կարելի է բաժանել երկու հիմնական խմբի՝ միկրոտնտեսական և մակրոտնտեսական:

Լիզինգի միկրոտնտեսական գործառույթն իր արտացոլումն է ստանում առանձին ձեռնարկությունների մասշտաբով:

Լիզինգի երկրորդ կարևորագույն գործառույթը վերաբերում է երկրի ամբողջ տնտեսության զարգացմանը: Լիզինգը հնարավորություն է ստեղծում

¹ Горемыкин В. А., Лизинг, Москва, 2003, с. 30.

² Крассева Т. А., Основы лизинга, Ростов Н/Д, Феникс, 2003, с. 12.

ազգային տնտեսության բոլոր ճյուղերի զարգացման համար, ինչպես նաև ապահովում է միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացումը և ընդլայնումը:

ՀՀ տնտեսության համար այս խնդիրը ավելի քան կարևոր է, քանի որ ձեռնարկություններում կիրառվող տեխնիկական միջոցները թե՛ բարոյապես, թե՛ ֆիզիկապես մաշված են:

Քնարկված տեսակետների համատեքստում կարելի է պնդել, որ ՀՀ-ում լիզինգի զարգացումը դարձել է խիստ անհրաժեշտ պահանջ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Газман В. Д., Лизинг: теория, практика, комментарии, Москва, 2003, с.12-14:
2. Балтус П., Майджер Б., Школа европейского лизинга//Лизинг-ревю, 1996, май N1:
3. Новицкий И. Б., Римское право, 6-ое изд. Стереотип, М., Гуманитарное знание, 1998, с.185-186:
4. Бутенина Н. В., Лизинг Великобритании// Лизинг-ревю, 2000, N3/4 с.27:
5. Хойтер В., Как делать бизнес в Европе, Москва, 1990, с.25-32:
6. Комаров В. В., Межгосударственный лизинг в СНГ, Государство и право, 1998, с.103:
7. Трушкевич Т. В., Трушкевич С.В., Лизинг, Амалфея, 2001, с. 25-30:
8. Горбенков В., Филатов Т., Закон о лизинге примет: анализ Лизинг-ревю N9-10, с.18:
9. Красева Т. А., Основы лизинга, Ростов Н/Д, Феникс, 2003, с. 6-7.
10. Кабатова Е. В., Лизинг: правовое регулирование, практика/ Е.В. Кабатова, М., ИНФРА-М., 1997, с.18.
11. Филипов К. К., Международный лизинг. Новая система экономических связей в России //К. К. Филипов, Б. С. Мигалатай, СПб: СПИТМО и ПФ, Надежда, 1992, с. 5.
12. Гусаков Б., Сидорович Ю., Лизинг-катализатор экономического роста.// Финансы 2001, N 1 с.12-14.

LEASING AS A SOURCE OF FUNDING FOR INNOVATIVE PROJECTS

HAYRAPETYAN GAYANE

Post-graduate student at YSU

e-mail: gayanhayrapetyan@mail.ru

In this article, the author explored the concept of leasing and its role in the efficient investment policy. Based on the results of critical analysis of approaches in the professional literature, the author highlights the characteristics that accurately describe the essence of leasing as a financial tool:

1. Leasing is a type of long-term funding to obtain main measures for the development of entrepreneurship.

2. Leasing is an opportunity to use production measures and consequently to seek profit without obtaining the right to their ownership, but with the possibility to obtain the right to property by the end of leasing.

3. Leasing is a type of funding that supplements loaning.

According to the author, a leasing deal is a type of complicated deals. Studying the functions of leasing, the author has divided them into two major groups - microeconomic and macroeconomic. The second important function of leasing concerns the development of the entire economy of the country. Leasing creates opportunities for the development of all sectors of the national economy, as well as develops and expands international economic relations.

According to the author, this issue is more than important for the economy of the Republic of Armenia as long as the technical measures used in enterprises are morally and physically bankrupt. In the context of discussed viewpoints, the author claims that the development of leasing in the Republic of Armenia is highly necessary.

Keywords: *leasing, rent, inventory, entrepreneurship, market, financial leasing, participants, deal, property, function, regulation, boost.*

АЙРАПЕТЯН ГАЯНЕ

Соискатель кафедры управления и предпринимательства ЕГУ

электронная почта: gayahayrapetyan@mail.ru

В статье рассмотрены понятие лизинг и его роль в процессе эффективной инвестиционной политики. Основываясь на результатах критического анализа подходов, существующих в специализированной литературе, автором были даны точные определения лизинга как самого финансового инструмента, в частности как,

1. Лизинг долгосрочное финансирование приобретения основных средств для развития предпринимательства.

2. Лизинг возможность для использования производственных средств и в результате этого – извлечения прибыли, без права на их имущество, но с возможностью получения права на имущество при окончании лизинга.

3. Лизинг – финансирование, дополняющее кредитование.

Согласно автору, лизинговая сделка относится к числу сложных сделок. Были исследованы функции лизинга, были выделены две основные группы – микроэкономическая и макроэкономическая. Вторая важнейшая функция лизинга касается развития всей экономики страны. Лизинг создает возможность для развития всех отраслей экономики страны, а также обеспечивает развитие и расширение международных экономических отношений.

По мнению автора для экономики Республики Армения данный вопрос более чем важен, пока применяемые в предприятиях технические меры морально и физически истощены. В контексте обсужденных точек зрения автор утверждает, что развитие лизинга в Республике Армения стало очень важным требованием.

Ключевые слова: лизинг, аренда, инвентарь, предпринимательство, рынок, финансовый лизинг, участники, сделка, имущество, функция, регуляция, поощрение.

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 05.06.2023թ.:

Հոդվածը գրախոսվել է 20.06.2023թ.:

Ընդունվել է տպագրության 17.05.2024թ.: